


Հատված, նրա երկարությունը, ճառագայթ, ուղիղ, հարթություն

Եթե մեզ հետաքրքրում է միայն առարկայի երկարությունը, ապա այն կարելի է պատկերել հատվածի տեսքով:

- Դրա համար նշենք A և B կետեր, այնուհետև օգտագործելով քանոնը, դրանք միացնող գիծ տանենք: Կատանանք A և B ծայրակետերով հատված: Ասում են AB հատված:



- Հատվածի ծայրակետերը նշանակում են լատիներեն մեծատառերով՝ A, B, C, D, \dots
- Սովորաբար հատվածի երկարությունը նշանակելու համար օգտագործում են երկու գծիկ:

Օրինակ՝ $|AB| = 9$ սմ:

Հատվածի հիմնական հատկությունը՝

- Հատվածի երկարությունը փոքր է նրա ծայրակետերը միացնող ցանկացած ուրիշ գծի երկարությունից:
- Երկու կետերը միացնող հատվածի երկարությունը կոչվում է այդ կետերի հեռավորությունը:

Ճառագայթ - ունի սկիզբ, բայց չունի վերջ

A

A ճառագայթ


Օրինակ՝ արևի ճառագայթը

Ուղիղ-չունի ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ

Օրինակ՝ հորիզոնը

a _____

a ուղիղ



Հարթ, սահմաններ չունեցող մակերևույթներն անվանում են **հարթություններ:**

Օրինակ՝ անապատը, ծովի մակերևույթը:

Միևնույն հարթության վրա գտնվող 2 ուղիղներ կա՛մ հատվում են, կամ ո՛չ:

Միևնույն հարթության վրա գտնվող 2 ուղիղները, որոնք չեն հատվում, կոչվում են **զուգահեռ ուղիղներ :**

_____ **զուգահեռ ուղիղներ**

~~_____~~ **Հատվող ուղիղներ**

Հարթության վրա գտնվող յուրաքանչյուր պատկեր կոչվում է **երկրաչափական պատկեր:**

Մաթեմատիկայի այն բաժինը, որն ուսումնասիրում է երկրաչափական պատկերները և նրանց հատկությունները, կոչվում է **երկրաչափություն:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Գծեք մի AB հատված և նշեք որևէ 3 կետ, որոնք չեն գտնվում այդ հատվածի վրա, և որևէ 2 կետ, որոնք գտնվում են այդ հատվածի վրա: U F. I

A _____ C _____ D _____ B

2. Գծեք այնպիսի AB և CD հատվածներ, որոնք բավարարեն հետևյալ պայամաններին՝

$|AB| = 2$ սմ 4 մմ, $|CD| = 3$ սմ 4 մմ:

A _____ B C _____ D

Գտեք AB և CD հատվածների գումարը:

$|AB| + |CD| = 2$ սմ 4 մմ + 3 սմ 4 մմ = 5 սմ 8 մմ

3. C կետը գտնվում է AB հատվածի վրա: Հայտնի է, որ CB հատվածի երկարությունը 3 անգամ փոքր է հատվածի երկարությունից: Որքա՞ն է հատվածի երկարությունը, եթե $|AB| = 12$ սմ:

$12:3=4$ ՔՊատ.՝ $|CB| = 4$ սմ

4. Գծեք մի հատված, որի երկարությունը 3 սմ-ով մեծ կլինի 4 սմ երկարություն ունեցող հատվածի երկարությունից:

A _____ B $|AB| = 7$ սմ

5. Գծեք մի հատված, որի երկարությունը 2 անգամ մեծ կլինի 3 սմ երկարություն ունեցող հատվածի երկարությունից:

A _____ B $|AB| = 6$ սմ


6. Հայտնի է, որ $|AB| = 4$ սմ, $|BC| = 7$ սմ: Գտեք AC հատվածի երկարությունը:

$|AB| + |BC| = 4$ սմ + 7 սմ = 11 սմ



7. Կարո՞ղ են մի կետից սկիզբ առնել միա քանի ճառագայթներ: Եթե


այո, պատկերել դրանք:



8. Քանի՞ հարթ մակերևույթից է կազմված ակվարիումը:

5 մակերևույթ

9. Գծե՛ք մի ուղիղ և նրա վրա նշե՛ք որևէ 2 կետ: Քանի՞ հատված և քանի՞ ճառագայթ կստացվի:




1 Հատված 2 ճառագայթ

10. Զուգահեռ ուղիղներից մեկի վրա վերցնենք A և B

կետերը, մյուսի վրա՝ C և D կետերը: Կարո՞ղ են արդյոք AB և CD հատվածները հատվել:


Ոչ,զուգահեռ ուղիները հատման կետ չեն ունենում:

11. Միևնույն կետով տարե՛ք 2 տարբեր ուղիղներ: Այդ կետում սկզբնավորվող քանի՞ ճառագայթ կստացվի:



12. Ընդամենը քանի՞ հատված է պատկերված

6



6

